ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբեր 2019թ. N ԱՊՀ/45-2019

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N364-Ա հրամանը.

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN1-2 հավելվածների:
2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին՝ առաջին եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

06.02.2019

X

VERIFIED OCSP 06.02.2019 17:01:07 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2019 թվականի 06 փետրվարի
N 2/45-2019 որոշման

2019 թվականի առաջին եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Արմավիր համայնք Արազափ համայնք Ակնալիճ համայնք Բագարան համայնք	10 աշխատանքային օր 5 աշխատանքային օր 5 աշխատանքային օր 5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ. Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի բաժնի պետի պաշտոնակատար. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.	Գոռ Հովհաննիսյան Լիաննա Հարությունյան Ռաֆիկ Երվանդյան

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.	Արմեն Դարբինյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ.	Աիդա Դանիելյան

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ ***Վ. Վարդազարյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 31.01.2019 12:31:33 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2019 թվականի փետրվարի
ՄՊ/45-2019 որոշման

2019 թվականի առաջին եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Լեռնագոգ համայնք	5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ 4. Առողջապահության բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետի պաշտոնակատար.	Լուսինե Նիկողոսյան
	Զարթոնք համայնք	5 աշխատանքային օր			
	Արտաշար համայնք	5 աշխատանքային օր			
	Մարգարա համայնք	5 աշխատանքային օր		Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.	Սիմոն Թովմասյան
	Քարակերտ համայնք	10 աշխատանքային օր			
	Արգավանդ համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.	Արշակ Ղորղանյան

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ.	Սողոմոն Սարգսյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար.	Արաքսյա Սարգսյան

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ ***Վ. Վարդազարյան***

31.01.2019

X

VERIFIED OCSP 31.01.2019 12:34:38 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217